դասասանի զրուց ունիմ ի հեռ դորա տիրոջն» (նոյն, էջ 118)։

Դարանաղցիի բարեկամները կը բողոքեն պատրիարքին (էջ 119) և Նաղաշին ըրածները կը բացատրեն։ Կեսարացի կը խոստանայ որ եթէ ուրիշներ ալ վկայեն՝ կարգազուրկ պիտի ընէ այս քահանան։

Այս միջոցին տեղակալները Դանիէլ վրդ. Այնթապցին և մի քանի «զիսաւոր այրեր» կը ղրկեն որպէսզի հաշտեցնեն Դարանաղցին և Կեսարացին, և «քազում աղաչանիօ» կ'առնեն կը տանին Դարանաղցին Ս. Սարգիս եկեղեցին, իրենց հետ ունենալով «քազմամբոխ ժողովուրդ»։

Գրիգոր Կեսարացին անարգանօք կ'ընդունի զայն, և փոխադարձ վէճէ յետոյ՝ կը կիջի գաւազանը դարձնելու և «վեր երեսսոք սուս հաշտութիւն» ընելու Դարանաղցիին հետ (էջ 120–122), ինչպէս կը հաստատուի քիչ յետոյ անոր աշակերտին՝ Սիմէոնի մահուան (✻ 1607 Հոկտ. 25) պարագային անոր պատճառած նեղութիւններով, զորոնք մանրամասն նկարագրած է Դարանաղցի (էջ 122–124), չեմ գիտեր որքան անկեղծութեամբ։

Գրիգոր վրդ. Կեսարացի յետոյ կը սկսի չարչարել «պանդուխտ եւ նժդեհ», «նորեկ», «տառապեալ, տնանկ եւ աղքատ» քահանաները,